

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

S. Սարգսյան	ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ա. Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Մանասարյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
S. Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ա. Նազարյան	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Մ. Հակոբյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Թադևոսյան	«Թրեյներների ազգային թիմ» ՀԿ-ի նախագահ
Զ. Լավյան	«Թրեյներների ազգային թիմ» ՀԿ-ի անդամ
Ա. Մինասյան	«Կազա» շվեյցարական հիմնադրամի տնօրեն
Հ. Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Խաչատրյան	«ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում» ՀԿ-ի նախագահ
Ա. Հակոբյան	«Հզոր հասարակություն» հիմնադրամի տնօրեն
Յ. Ակոպյան	Վ. Բյուրաքանի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտորի օգնական

Վ. Գասպարյան	Երևանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
Ա. Քարամյան	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի Մանկավարժական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
Մ. Մովսիսյան	Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնի առաջատար մասնագետ
Հ. Մամիջանյան	«Արլիան» խորհրդատվական և թրեյնինգ ընկերության համակարգող
Ռ. Սարգսյան	«Երիտասարդական ալիք» ՀԿ-ի նախագահ
Կ. Այվազյան	«Քաղաքացիական հասարակության և ՏԻՄ աջակցման ծրագրի Մառնադըյուրի համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբի» համակարգող
Օ. Դուլգարյան	«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Հրավիրվածներ՝	
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Գ. Գրիգորյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ն. Գալաստյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Պապյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության ծրագրերի մշակաման և համագործակցության բաժնի պետ
Մ. Սարգսյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության համագործակցության և վերլուծությունների բաժնի պետ

Դ. Հայրապետյան	Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն
Ս. Մանուկյան	«Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ վորձագետ
Ա. Հեքոյան	Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին առնթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղարի ընտրության մասին

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ վարչապետին առնթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղարի ընտրության հարցը քննարկել ՀՀ վարչապետին առնթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի հաջորդ նիստում՝ ապահովելով համապատասխան թեկնածուի ներկայությունը:

2. ՀՀ վարչապետին առնթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2009-2012 թվականների աշխատանքների արդյունքների ամփոփում և 2013 թվականի աշխատանքների կազմակերպման նպատակով աշխատանքային խմբեր ձևավորելու մասին

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ՀՀ վարչապետին առնթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2009-2012 թվականների աշխատանքների արդյունքները՝ ընդունելով ի գիտություն ՀՀ վարչապետին առնթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նախագահի տեղակալ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանի հաղորդումը:

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին՝ ձեռնարկել միջոցներ՝ բոլոր միջազգային միջոցառումների (այդ թվում՝ համահայկական երիտասարդական միջոցառումների) և վերապատրաստումների ծրագրերում ԼՂՀ-ի համապատասխան ներկայացուցիչներին ներգրավելու համար.

3) 2013 թվականի աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ բաղկացած հետևյալ 5 անդամից՝

- ա. «ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում» ՀԿ-ի նախագահ Կ. Խաչատրյան,
- բ. «Թրեյներների ազգային թիմ» ՀԿ-ի նախագահ Ա. Թադևոսյան,
- գ. «Կազա» շվեյցարական հիմնադրամի տնօրեն Ա. Մինասյան,
- դ. «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն

Օ. Դուրգարյան,

ե. ՀՀ վարչապետի օգնական Մ. Հակոբյան:

3. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի 2-րդ՝ վերլուծական մասի ներկայացում

(Ս. Մանուկյան, Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատվերով կատարված «Հայաստանի երիտասարդական ազգային զեկույցի» վերլուծական մասի՝ «Այ Փի Էս Մի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի փորձագետ Ս. Մանուկյանի զեկույցը:

4. «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին

(Ա. Պապյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի բոլոր անդամներին՝ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության նախագծի լրամշակման նպատակով 2-օրյա ժամկետում գրավոր առաջարկությունները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ՝

ա. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի 2-րդ՝ վերլուծական մասում ներկայացված առաջարկությունները ներառել ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության նախագծում մասնավորապես՝

- մինչև 20 տարեկան մայրերի համար սահմանել ինտերնետով հեռավար ուսուցումը,
 - բուհերում սովորող, մինչև 20 տարեկան մայրերի ուսման վարձի սուբսիդավորում,
 բ. հաշվի առնելով Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի 2-րդ՝ վերլուծական մասում ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև ստացվելիք բոլոր գրավոր առաջարկությունները՝ լրամշակել ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության նախագիծը.

3) առաջարկել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանին և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանին՝ ուսումնասիրելով միջազգային փորձը՝ ներկայացնել առաջարկություն ՀՀ ԶՈւ-ում զինծառայողների շրջանում ծխախոտի օգտագործման թվի կրճատման վերաբերյալ.

4) առաջարկել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանին՝ ուսումնասիրել մինչև 20 տարեկան մայրերի համար ինտերնետի միջոցով բարձրագույն կրթության համակարգ ներդնելու և կրթաթոշակով ապահովելու հնարավորությունը ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդին համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով:

5. ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում երիտասարդական քաղաքականությամբ զբաղվողի հաստիքի առանձնացման հնարավորության և ՀՀ մարզպետներին կից երիտասարդական խորհուրդների ձևավորման հարցի քննարկում

 (Ա. Քարամյան, Տ. Մարգարյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանին և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանին համատեղ ուսումնասիրել ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում երիտասարդական քաղաքականությամբ զբաղվողի հաստիքի առանձնացման, ինչպես նաև ՀՀ մարզպետներին կից երիտասարդական խորհուրդների ձևավորման հնարավորության հարցը և արդյունքների մասին տեղեկացնել խորհրդին:

6. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշմամբ հաստատված «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվության ներկայացում

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանի հաղորդումը՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի կատարման ընթացքի մասին:

7. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից 2012 թվականին իրականացված ծրագրերի համառոտ ներկայացում

(Դ. Հայրապետյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դ. Հայրապետյանի հաղորդումը:

8. ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաքի հռչակման նպատակով աշխատանքային խումբ ձևավորելու մասին

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարվա մայրաքաղաքի հռչակման կանոնակարգի նախագիծը,

2) կանոնակարգի նախագծի մշակման աշխատանքներին ներգրավել ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամներին:

9. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և նոր փորձագետների հաստատում

(Ա. Թադևոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

- 1) ընդունել ի գիտություն «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Թադևոսյանի հաղորդումը.
- 2) հաստատել նոր փորձագետների թեկնածությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐ**

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի քարտուղարի ընտրության հարցը քննարկել ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի հաջորդ նիստում՝ ապահովելով համապատասխան թեկնածուի ներկայությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր
ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)
կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը ո ռ ո շ ու մ է՝

1. Հաստատել ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական
քաղաքականության խորհրդի 2009-2012 թվականների աշխատանքների արդյունքները՝
ընդունելով ի գիտություն ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական
քաղաքականության խորհրդի նախագահի տեղակալ, ՀՀ սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանի հաղորդումը:

2. 2013 թվականի աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծել
աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

- | | |
|---------------|---|
| Կ. Խաչատրյան | - «ԵՊՀ երիտասարդ գիտնականների միավորում» ՀԿ-ի
Նախագահ |
| Ա. Թադևոսյան | - «Թրեյներների ազգային թիմ» ՀԿ-ի նախագահ |
| Ա. Մինասյան | - «Կազա» շվեյցարական հիմնադրամի տնօրեն |
| Օ. Դուլգարյան | - «Հմայնքային համախմբման և աջակցության կենտրոն»
ՀԿ-ի գործադիր տնօրեն |
| Մ. Հակոբյան | - ՀՀ վարչապետի օգնական |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 3

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑԻ»
2-ՐԴ՝ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԱՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը ու ր ու չ ու մ է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատվերով կատարված «Հայաստանի երիտասարդական ազգային զեկույցի» վերլուծական մասի՝ «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի փորձագետ Ս. Մանուկյանի զեկույցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 4

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2013-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը ո ղ ո շ ու մ է՝

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամներին՝ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության նախագծի լրամշակման նպատակով 2-օրյա ժամկետում գրավոր առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ՝

1) Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի 2-րդ՝ վերլուծական մասում ներկայացված առաջարկությունները ներառել ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության նախագծում մասնավորապես,

ա. մինչև 20 տարեկան մայրերի համար սահմանել ինտենսետով հեռավոր ուսուցում,

բ) բուհ-երում սովորող մինչև 20 տարեկան մայրերի ուսման վարձի սուբսիդավորում,

2) Հաշվի առնելով երիտասարդության ազգային զեկույցի 2-րդ՝ վերլուծական մասում ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև ստացվելիք բոլոր գրավոր առաջարկությունները՝ լրամշակել ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության նախագիծը:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանին և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանին՝ ուսումնասիրելով միջազգային փորձը՝ ներկայացնել առաջարկություն ՀՀ ՁՈԻ-ում զինծառայողների շրջանում ծխախոտի օգտագործման թվի կրճատման վերաբերյալ:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանին՝ ուսումնասիրել մինչև 20 տարեկան մայրերի համար ինտերնետի միջոցով բարձրագույն կրթության համակարգ ներդնելու և կրթաթոշակով ապահովելու հնարավորությունը՝ ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդին համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՍՏԻՔԻ
ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻՆ ԿԻՑ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր
ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)
կանոնադրության 10-րդ կետով և Հայաստանի Հանրապետության մարզերում համա-
կարգված, հասցեավորված ու նպատակային երիտասարդական քաղաքականության
իրականացման նպատակով՝ Խորհուրդը ո ռ ո շ ու մ է՝

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման
նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանին և Հայաստանի Հանրապետության
սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանին
համատեղ ուսումնասիրել ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում երիտասարդա-
կան քաղաքականությամբ զբաղվողի հաստիքի առանձնացման, ինչպես նաև ՀՀ
մարզպետներին կից երիտասարդական խորհուրդների ձևավորման հնարավորության
հարցը և արդյունքների մասին տեղեկացնել խորհրդին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 6

**«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանի հաղորդումը՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի կատարման ընթացքի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր
ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)
կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը ո ր ո շ ու մ է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական
միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրեն Դ. Հայրապետյանի հաղորդումը 2012 թվականին
իրականացված ծրագրերի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ
ՀՈՉԱԿՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը ո ը ո շ ու մ է՝

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարվա մայրաքաղաքի հռչակման կանոնակարգի նախագիծը:

2. Կանոնակարգի նախագծի մշակման աշխատանքներին ներգրավել ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2012 թվականի N 9

**ԳՈՐԾՈՂ ԱՌՑԱՆՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 10-րդ կետով՝ Խորհուրդը որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ, «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Թադևոսյանի հաղորդումը գործող առցանց դրամաշնորհային համակարգի գործունեության մասին:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի փորձագետների կազմը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ վարչապետին առնթեր ազգային
Երիտասարդական քաղաքականության խորհրդի
2012 թվականի դեկտեմբեր 19-ի նիստի N 9 որոշման

Կ Ա Ձ Մ

**Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության
երիտասարդական պետական քաղաքականության
շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի
փորձագետների**

Լիա Խաչատրյան	- «Զարգացում և ինտեգրացիա» հասարակական կազմակերպության ղեկավար
Լիլիթ Մկրտչյան	- ԵՊՀ պատմության ֆակուլտետի, համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս
Ալվարդ Մինասյան	- «Երաշխիք քաղաքացիական հասարակության կենտրոն» հասարակական կազմակերպության Շիրակի մարզի միգրացիոն տեղեկատվական կենտրոնի համակարգող
Անուշ Օհանյան	- «Մխիթար Հերացու անվան N 1 համալսարանական կլինիկայի» կլինիկական օրդինատոր
Արաքսյա Պողոսյան	- «Նոր սերունդ» հասարակական կազմակերպության կամավորական ծրագրերի բաժնի համակարգող
Արթուր Փոքրիկյան	«ԱՅՄԵԿ» միջազգային երիտասարդական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության նախագահ
Արշակ Գասպարյան	- «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության համագումարի նախագահ
Գայանե Գրիգորյան	- Չարենցավանի «Ռեսուրս կենտրոն» բարեգործական Հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ
Դավիթ Դավթյան	- ԱՄՆ-ի Տեխասի համալսարանի դեկանի ասիստենտ
Երվանդ Հակոբյան	- «Էրեբունի» բժշկական կենտրոնի արյան ծառայության բժիշկ, արյունաբան կոնսուլտանտ
Մարինա Գալստյան	- «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի» հիմնադիր տնօրեն
Ռազմիկ Սարգսյան	- «Երիտասարդական ալիք» հասարակական կազմակերպու-

	թյան նախագահ
Սարհատ Պետրոսյան	- «ՈւրբանԼաբ» հասարակական կազմակերպություն
Ատոմ Մխիթարյան	- «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ
Գոռ Մարգարյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
Ռոզա Հակոբյան	- «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրերի իրականացման և գնումների կատարման բաժնի պետ
Արմեն Թադևոսյան	- Երևանի պետական համալսարանի իրավաբանական բաժնի պետ
Տիգրան Պետրոսյան	- ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղի «Էլեկտրատեխնիկա և ավտոմատիկա» ամբիոնի ասիստենտ
Օլեգ Դուլգարյան	- ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ
Հայկ Մամիջանյան	- ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ
Գերասիմ Բարսեղյան	- «Մեդիա-Մոդել» հետազոտավերլուծական ընկերության տնօրեն
Արա Մելիքջանյան	- «Նոր Սերունդ» հասարակական կազմակերպության «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը SUS-ների շրջանում Շիրակի և Լոռու մարզերում» ծրագրում աուդիոյ /սոցիալական աշխատող/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԵՆ ՔԱՐԱՍՅԱՆ